ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՎԵՂԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

09 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներից 6-ը:

Բացակա էին ավագանու անդամներ՝ Արամայիս Գալստյանը և Արմենակ Մխիթարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորիկ Մարտիրոսյանը

Նիստը արձանագրում էր Աննա Մովսիսյանը

ԼՍԵՑԻՆ-Համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացրեց 09.01.2019թ. թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1.Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

2.Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Ն. Մարտիրոսյան)

3. Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի հաստատման մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

4.Փոքր Վեղու համայնապետարանի աշխատակազմի և ենթակայության տակ գտնվող բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

5.<<Փոքր Վեղու Հայդի Քինդի անվան Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրենի ներկայացրած դիմումի քննարկման մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ավագանու անդամները հավանություն տվեցին զեկուցողի կողմից ներկայացված օրակարգին:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի14-րդ հոդվածի 6-րդ կետով

Հաստատել Փոքր Վեղի համայնքի ավագանու 09.01.2019թ. թիվ 1 հերթական նիստի օրակարգը.

1.Տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

2.Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու մասին

(Զեկուցող՝ Ն. Մարտիրոսյան)

3. Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի հաստատման մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

4.Փոքր Վեդու համայնապետարանի աշխատակազմի և ենթակայության տակ գտնվող բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

5.<<Փոքր Վեդու Հայդի Քինդի անվան Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրենի ներկայացրած դիմումի քննարկման մասին:

(Զեկուցող՝ Ա. Մովսիսյան)

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԼՍԵՑԻՆ- Ա. Մովսիսյանը ներկայացրեց <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 13 հոդվածները՝ 2019թ. Փոքր Վեդի համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ավագանու անդամները քննարկեցին և սահմանեցին 2019թ Փոքր Վեդի համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով

Հայաստանի Հանրապետության Փոքր Վեդի համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նարտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000** դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000** դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000** դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000** դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500** դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2500** դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1500** դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **2500** դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **45000** դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **37500** դրամ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000** դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **9000** դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12000** դրամ
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15000** դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22500** դրամ
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **75000** դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000** դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **9000** դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **12000** դրամ
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15000** դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **22500** դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **75000** դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **105** դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի նվիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **100000** դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 500000 դրամ,

դ. խաղատների համար՝ 1000000 դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ **375000** դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 500000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3750** դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7500** դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **11250** դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15000** դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **22500** դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող Պհանրային սննդի օբյեկտի համար՝ **37500** դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **750** դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1500** դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000** դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000** դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **11250** դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **18750** դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **600** դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1050** դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ 0դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **450** դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50000** դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **7500** դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **375000** դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1875000**դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3750000** դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5250000** դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7500000** դրամ:

2. 1,2,3,12 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը:

3. 5,6,7,10,13,14,15 կետերի համար կիրառված է 0.75 գործակիցը:

4. 8.11 կետերի համար կիրառված է 0.3 գործակիցը:

5. 4 և 9 կետերի համար գործակից կիրառված չէ:

6. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 07.12.2017թ. թիվ 32-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության Փոքր Վեդի սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2000 դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 դրամ

6)Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել՝

6.1 կենցաղային աղբի համար՝փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 120 դրամ:

6.2 առևտրի (այդ թվում՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝ 1 քմ - 20 դրամ,

6.3հյուրանոցներիհյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 10 դրամ,

6.4արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 4 դրամ,

6.5կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ - 2 դրամ,

7)Սահմանել համայնքի ենթակա կազմակերպություններում ծնողական մուծումների հետևյալ դրույքաչափերը.

ա/ <<Զարթոնք մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում

յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան՝ 5000 դրամ:

բ/ «Փոքր Վեդու Հայդի Քինդի անվան Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ հաճախող Փոքր Վեդի համայնքում բնակվող երեխաների ծնողական վարձավճարը 2018թ. հունվարի 1-ից սահմանել՝

1. Դաշնամուր, ջութակ 2200 դրամ
2. Դհոլ, քանոն 1500 դրամ
3. Վոկալ 2000 դրամ
4. Պարարվեստ 1500 դրամ
5. Կերպարվեստ 1500 դրամ
6. Կիրառական արվեստ 1500 դրամ
7.

Այլ համայնքներից «Փոքր Վեդու Հայդի Քինդի անվան Արվեստի դպրոց ՀՈԱԿ» հաճախող երեխաների ծնողական վարձավճարը 2018թ. հունվարի 1-ից սահմանել՝

1. Դաշնամուր, ջութակ 3200 դրամ
2. Դհոլ, քանոն 2500 դրամ
3. Վոկալ 3000 դրամ
4. Պարարվեստ 2500 դրամ
5. Կերպարվեստ 2500 դրամ
6. Կիրառական արվեստ 2500 դրամ

Փոքր Վեդի համայնքում բնակվող, Արցախյան շարժման ժամանակ զոհված, վիրավոր զինծառայողների և ազատամարտիկների երեխաներին, հաշմանդամություն ունեցող երեխաներին և խիստ կարիքավոր ընտանիքների, բազմազավակ ընտանիքների երեխաներին, միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ երեխաներին և գերազանց սովորող երեխաներին ազատել ծնողական վարձավճարից:

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 0 դրամ:

9). Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 07.12.2017թ. թիվ 32-Ն որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԼՍԵՑԻՆ-Համայնքի ղեկավարը ներայացրեց Փոքր Վեդու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից առաջատար մասնագետի պաշտոնը /ծածկագիր 3.1-1/ հանելու /հանելու մասին հարցը՝

Համայնքի ղեկավարը նշեց, որ նշված հաստիքը թափուր և նպատակահարմար է գտնում այն հանել պաշտոնների անվանացանկից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Հովհաննես Մուրադյանը նշեց, որ դեմ է հաստիք հանելուն, քանի որ վերջինս չունի աշխատանք և եթե տվյալ պաշտոնի համար հայտարարվի մրցույթ, ապա նա կմասնակցի:

Տիգրան Ստեփանյանը համայնքի ղեկավարին ասաց, որպեսզի մանրամասն ներկայացնի, թե համայնքապետարանի աշխատակցիներից յուրաքանչյուրն ինչ գործառույթ է իրականացնում և ասաց նաև, որ այսուհետ համայնքի ղեկավարը համայնքային ծառայության թափուր հաստիքների համար անցկացնի մրցույթ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ղեկավարավելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 18 կետով

Փոքր Վեդու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարել հետևյալ փոփոխությունը՝

անվանացանկից հանել առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-1/ պաշտոնը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԼՍԵՑԻՆ-Ա. Մովսիսյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ղեկավարավելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 11 կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով

1.Սահմանել Փոքր Վեդի համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2.Ուժը կորցրած ճանաչել Փոքր Վեդի համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 7-ի թիվ 34 որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԼՍԵՑԻՆ-Ա. Մովսիսյանը ներկայացրեց Փոքր Վեդու համայնքապետարանի, մշակույթի տան, <<Զարթոնք>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի, <<Հայդի Քինդի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Համայնքի ղեկավարը ավագանուն առաջարկեց ստեղծել օպերատորի հաստիք:

Սնակ Մանուկյանը նշեց, որ օպերատորի հաստիքը հանվել է 2015 թվականին և կրկին այն բացելու անհրաժեշտություն չի տեսնում: Ավագանու անդամները հավանություն տվեցին Սնակ Մանուկյանի առաջարկին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ավագանու անդամ Գալուստ Մանուկյան առաջարկեց համայնքապետարանի հաստիքացուցակից հանել վարորդի հաստիքը:

Ավագանու անդամները հավանություն տվեցին Գալուստ Մանուկյանի առաջարկին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Վալերիկ Հովհաննիսյանն առաջարկեց հանել նաև համայնքի ղեկավարի տեղակալի հաստիքը: Հովհաննես Մուրադյանը դեմ արտահայտվեց առաջարկին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Համայնքի ղեկավարն ասաց, քանի որ աշխատակազմի քարտուղարի աշխատանքը ծանրաբեռնված է, առաջարկեց աշխատավարձը բարձրացնել:

Վալերիկ Հովհաննիսյանն առաջարկեց աշխատակազմի քարտուղարի աշխատավարձը սահմանել 140000 ՀՀ դրամ:

Ավագանու անդամները հավանություն տվեցին առաջարկին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Ավագանու անդամ Տիգրան Ստեփանյանն ասաց, որ անհրաժեշտ է հսկողություն սահմանել մշակույթի տան մարզիչների գործունեության վրա և առաջարկեց համայնքի ղեկավարին հանձնանարել մաշկույթի տան տնօրենին պարբերաբար հաշվետություններ ներկայացնել մշակույթի տան գործունեության վերաբերյալ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Գալուստ Մանուկյանն առաջարկեց <<Զարթոնք>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակից հանել վարորդի և պարուսույցի հաստիքները և ստեղծել խոհարարի օգնականի հաստիքը:

Մանկապարտեզում տարվա ընթացքում խմբերի կրճատման դեպքում մանկապարտեզի բուժքույրին վարձատրել մեկ դրույք:

Ավագանու անդամները հավանություն տվեցին Գալուստ Մանուկյանի առաջարկին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով

Հաստատել Փոքր Վեդու համայնքապետարանի, մշակույթի տան, <<Զարթոնք>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի, <<Հայդի Քինդի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

2.Ուժը կորցրած ճանաչել Փոքր Վեդի համայնքի ավագանու 2017 թ-ի դեկտեմբերի 7 թիվ 33-Ն որոշումը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԼՍԵՑԻՆ-Ն. Մարտիրոսյանը ներկայացրեց <<Փոքր Վեդու Հայդի Քինդի անվան Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրենի ներկայացրած դիմումը դպրոցի հիմնախնդիրների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ավագանու անդամներն ասացին, որ դիմումը կքննարկվի համայնքի բյուջեն հաստատելու ժամանակ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Ավագանու անդամ Սևակ Մանուկյանը համայնքի ղեկավարին ասաց, որ հաջորդ ավագանու նիստին իրենց տրամադրի 2018թ. բյուջեի կատարողականը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ